ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N 18 - Լ

ՌՈՏԱՑԻԱՅԻ ԵՆԹԱԿԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի 2-րդ հոդվածի 4-րդ մասի և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի մարտի 14-ի N 270-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հրամայում եմ՝

1. Սահմանել ռոտացիայի ենթակա ոստիկանության ծառայողների ցանկը և ռոտացիայի իրականացման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 6-ի N 1254-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից:

Ա.ՄԱՐԳՍՅԱՆ
28.02.2026թ.

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
ներքին գործերի Նախարարի
«28» փետրվարի 2026թ.
N 18 -Լ հրամանի

ՌՈՏԱՑԻԱՅԻ ԵՆԹԱԿԱ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ՌՈՏԱՑԻԱՅԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Սույն հավելվածով սահմանվում է Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանական պաշտոններում և ոստիկանությունում ռոտացիայի ենթակա ոստիկանության ծառայողների ցանկը և կարգավորվում են ռոտացիայի իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Ռոտացիայի կարող են ենթակա լինել՝
   1) ոստիկանության գլխավոր խմբի ծառայողները.
   2) ոստիկանության ավագ խմբի ծառայողները.
   3) ոստիկանության միջին խմբի ծառայողները.
   4) ոստիկանության կրտսեր խմբի ծառայողները:

3. Ռոտացիան կարող է իրականացվել երեք տարին մեկ պարբերականությամբ:

4. Ռոտացիան կարող է իրականացվել միայն հավասարազոր պաշտոն զբաղեցնող ոստիկանության ծառայողների միջև:

5. Ռոտացիան իրականացվում է տվյալ ծառայողին պաշտոնի նշանակելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հրամանով: